

## **Խոշոր և միջին բիզնեսի վարկային (երաշխիք, վարկային գիծ, օվերդրաֆտ և այլն) հայտի ուսումնասիրության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ<sup>1</sup>**

### **1. Իրավաբանական փաստաթղթեր:**

- 1.1 Գլխավոր տնօրենի՝ Տնօրինության նախագահի անունով ներկայացված վարկային հայտ (հայտատուի տնօրենի ստորագրությամբ հաստատված), Բանկի կողմից սահմանված ձևով:
- 1.2 Հայտատուի Կանոնադրության և ՀՎՀՀ պատճենները:
- 1.3 Հայտատուի պետական գրանցման վկայականի պատճենը ներդիրներով:
- 1.4 Հայտատուի ղեկավարի/տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրերի և սոցիալական քարտերի (առկայության դեպքում) պատճենները: Բաժնետիրական ընկերության դեպքում՝ նաև 10% և ավել բաժնետուն ունեցող բաժնետիրոջ անձնագրի և սոց. Քարտի (առկայության դեպքում) պատճենները: Իրավաբանական անձ բաժնետիրոջ դեպքում՝ 1.2-1.4 կետերով սահմանված բոլոր փաստաթղթերը:
- 1.5 Համապատասխան արտոնագրի կամ թույլտվության պատճենը (առկայության դեպքում):
- 1.6 Գրավադրվող գույքի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը: Անշարժ գույքի նոր ձևի սեփականության վկայականի դեպքում (տրված սկսած 2012 թ-ի հունվարից)՝ նաև հողամասի և շինության հատակագիծի պատճենը, տրված ՀՀ օրենսդրության համապատասխան որակավորման վկայական ստացած անձի կողմից: Ֆիզիկական անձ գրավատուի դեպքում՝ սեփականատիրոջ անձնագրի, էթե ամուսնացած է՝ ամուսնու/կնոջ անձնագրի և ամուսնության վկայականի պատճենները:
- 1.7 Երրորդ անձ իրավաբանական անձ գրավատուների դեպքում՝ լրացուցիչ գրավատուի մասով 1.2-1.5 և 1.11 կետերով սահմանված բոլոր փաստաթղթերը:
- 1.8 Երրորդ անձ ֆիզիկական անձ երաշխավորի դեպքում՝ լրացուցիչ երաշխավորների և նրա ամուսնու անձնագրերի պատճենները և նրանց մասով 1.11 կետով սահմանված փաստաթուղթը:
- 1.9 Երրորդ անձ իրավաբանական անձ երաշխավորի դեպքում՝ լրացուցիչ երաշխավորի մասով 1.2-1.5 և 2.2-2.5 կետերով սահմանված փաստաթղթերը:
- 1.10 Խոշոր բիզնեսի ներկայացուցիչ հայտատուի դեպքում՝ գրավի նախնական գնահատման վերաբերյալ տեղեկանք (անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ չվճարված կադաստրային արժեքի մասով պատրավորությունների նշումով) տրված Բանկի կողմից հավաստարագրված գնահատող ընկերության կողմից:
- 1.11 Կազմակերպության տնօրենի/ղեկավարի և գլխավոր հաշվապահի (բաժնետիրական ընկերության դեպքում՝ նաև 10% և ավել բաժնեմաս ունեցող բաժնետերերի), Գրավատուի/Երաշխավորի Բանկի կողմից ՀՀ ԿԲ վարկային ռեսզիստրից և/կամ «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ»-ից հայտատուի ֆինանսական պատարվությունների և այլ տեղեկատվության վերաբերյալ հարցում կատարելու գրավոր համաձայնությունը:
- 1.12 Բանկի կողմից պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

### **2. Ֆինանսական փաստաթղթեր:**

- 2.1 Վարկային գործարքի շրջանակներում վարակվորման նպատակը հավաստող փաստաթղթեր (պայմանագրեր, համաձայնագրեր, վճարման հանձանարարականներ և պահանջագրեր, հաշիվ-ապրանքագրեր, ակտեր և այլն):
- 2.2 ԱԱՀ վերաբերյալ հաշվետվություն անցյալ ֆինանսական տարվա համար, ինչպես նաև ընթացիկ տարվա բոլոր ամիսների համար, շահութահարկի վերաբերյալ հաշվետվություն վերջին հաշվետու ժամկետի դրությամբ (անհրաժեշտության դեպքում բացված ձևով) հարկային մարմինների ներկայացված, ղեկավարի/տնօրենի ստորագրությամբ: Դրամական հոսքերի վերաբերյալ հաշվետվություն (պատմական):

- 2.3 Կառավարչական հաշվետվություններ բանկի կողմից սահմանված ձևով:
- 2.4 Այլ բանկերից ստացված գործող ֆինանսավորման/վարկերի վերաբերյալ տեղեկատվություն (գործող վարկային, գրավի, երաշխավորության պայմանագրերի պատճենները, մարումների գրաֆիկ և գրավադրված գույքի ցանկ):
- 2.5 Այլ բանկերում հաշիվների առկայության դեպքում՝ հաշվի քաղվածքներ բոլոր հաշիվների վերջին 12 ամսիների շրջանառության և մնացորդների վերաբերյալ:
- 2.6 Պետական եկամուտների կոմիտեից տեղեկանք պետական բյուջեում ունեցած պարտավորությունների վերաբերյալ:
- 2.7 Դեբիտորների և Կրեդիտորների ցանկը բանկի կողմից սահմանված ձևով.
- 2.8 Աուդիտորական հաշվետվություն պահանջվող ժամանակահատվածի համար (առկայության դեպքում):
- 2.9 Բանկի կողմից պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

### **3. Կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպությունների համար:**

- 3.1 Լրացուցիչ փոխկապակցված անձ հանդիսացող կազմակերպության համար 1.2-1.5 և 1.11 կետերով սահմանված բոլոր փաստաթղթերը:
- 3.2 Հայտատուի բիզնեսի հետ փոխկապակցված կազմակերպությունների առկայության դեպքում՝ փոխկապակցված անձանց մասով 2.2-2.5 և 2.7 կետերով սահմանված բոլոր փաստաթղթերը:

### **4. Խոշոր և միջին բիզնեսի Վարկային (երաշխիք, վարկային գիծ, օվերդրաֆտ և այլն) գործարքների ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**

- 4.1. Տեղեկանք Պետական ռեգիստրից կանոնադրության վերջին փոփոխություններ, հիմնադիրների և տնօրենի վերաբերյալ<sup>2</sup>:
- 4.2. Տեղեկանք ռեեստրից բաժնետերերի կազմի վերաբերյալ<sup>2</sup>:
- 4.3. Բոլոր հիմնադիր փաստաթղթերի և թույլտվությունների (անհրաժեշտության դեպքում) բնօրինակները, որոնք անհրաժեշտ են վարկային գործարքի ձևակերպման համար համաձայն կազմակերպության կանոնադրության և ՀՀ օրենսդրության<sup>3</sup>:
- 4.4. Հայտատուի ղեկավարի/տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրերի և սոցիալական քարտերի (առկայության դեպքում) պատճենները: Բաժնետիրական ընկերության դեպքում՝ նաև 10% և ավել բաժնետոմս ունեցող բաժնետիրոջ անձնագրի և սոց. Քարտի (առկայության դեպքում) պատճենները:
- 4.5. Առաջարկվող գրավի սեփականության վկայականի բնօրինակը: Անշարժ գույքի նոր ձևի սեփականության վկայականի դեպքում (տրված սկսած 2012 թ-ի հունվարից)՝ նաև հողամասի և շինության հատակագիծի բնօրինակը, տրված ՀՀ օրենսդրության համապատասխան որակավորման վկայական ստացած անձի կողմից: Եթե գրավադրվող գույքը տրված է վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման նաև վարձակալի կամ օգտագործողի գրավոր համաձայնությունը գրավի ձևակերպման վերաբերյալ և վարձակալության պայմանագրի պատճենը, ինչպես նաև վարձակալի կամ օգտագործողի գրավոր համաձայնությունը պայմանագրի լուծման և գույքի ազատման վերաբերյալ /Բանկի կողմից բռնագանձման հայց ներկայացնելու կամ գույքի իրացման դեպքում/:
- 4.6. Անշարժ գույքի դեպքում՝ միասնական տեղեկանք Պետական կադաստրից: Շարժական գույքի դեպքում՝ ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք Ճանապարհային ոստիկանությունից: Բաժնետոմսերի գրավի դեպքում՝ տեղեկանք պետական ռեգիստրից/դեպոզիտարիից սահմանափակումների վերաբերյալ:
- 4.7. Խոշոր բիզնեսի սուբյեկտների համար՝ բանկի կողմից հավատարագրված գնահատողի կողմից տրամադրված գույքի վերջնական գնահատման ակտ: Միջին բիզնեսի սուբյեկտների համար՝ Բանկի գրավադրվող գույքի հետ աշխատող ստորաբաժանման կողմից տրված գույքի գնահատման վերջնական եզրակացություն: Անշարժ գույքի գնահատման ակտը/եզրակացությունը պետք է ներառի չվճարված կադաստրային արժեքի մասով պարտավորությունների վերաբերյալ նշում:
- 4.8. Երրորդ անձ իրավաբանական անձ գրավատուների համար՝ լրացուցիչ 4.1-4.3 կետերով սահմանված փաստաթղթերը գրավատուի մասով: Եթե Գրավատու/Երաշխավորը հանդիսանում է ֆիզիկական անձ Գրավատուի/Երաշխավորի անձնագրի պատճենը, եթե ամուսնացած է՝ ամուսնու/կնոջ/ անձնագիրը և ամուսնության վկայականը:
- 4.9. Բանկի կողմից պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

<sup>1</sup> Այն դեպքում, երբ Բանկում առկա են վարկային հայտի ուսումնասիրության համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկատվություն, նյութեր), ապա դրանք հաճախորդից նորից չեն պահանջվում: Հաճախորդի կողմից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հաստատված կազմակերպության ղեկավարի/տնօրենի ստորագրությամբ և “խկականի հետ ճիշտ է” նշումով:

- Անհրաժեշտության դեպքում՝ Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ տեղեկատվություն/փաստաթղթեր:

<sup>2</sup> Պետական ռեզիստրից կանոնադրության վերջին փոփոխություններ, հիմնադիրների և տնօրենի վերաբերյալ և ռեեստրից բաժնետերերի կազմի վերաբերյալ տեղեկանքների տրամադրման օրվանից 15 աշխատանքային օր անցնելու դեպքում դրանք կարող են համարվել ուժը կորցրած և կրկին պահանջվել Բանկի կողմից:

<sup>3</sup> ՀՀ օրենսդրության և կազմակերպության Կանոնադրության պահանջներից ելնելով կարող է անհրաժեշտ լինել կազմակերպության բաժնետերերի ժողովի կամ խորհրդի որոշում, որը պետք է պարունակի հետևյալ նվազագույն տեղեկատվությունը՝

— Ժողովի/խորհրդի արձանագրության համար;

— Ժողովի/խորհրդի անցկացման ամսաթիվը;

— Ժողովի/խորհրդի մասնակիցների քանակը և հղում գործող կանոնադրության քվորումի ապահովման վերաբերյալ կետին, այդ թվում խոշոր գործարքների համար;

— Ժողովի/խորհրդի օրակարգը, որը պետք է պարունակի ՎՏԲ (Հայաստան)՝ ՓԲԸ-ից վարկ ստանալու, գրավադրվող գույքի, այլ ապահովության, գրավատուների և երաշխավորների հարցերը (նշելով վարկի գումարը, նպատակը, տոկոսադրույթը և այլ արժեքային պայմանները, մարմանը ժամկետը և կարգը, տուգանքները, գրավի առարկան և գնահատվա արժեքը (առկայության դեպքում), համաձայնություն վարկային պայմանագրի խախտման, դեպքում գրավի առարկային արտադատարանային իրացման վերաբերյալ, այդ թվում՝ համաձայնություն գրավի սեփականության իրավունքը գրավի պայմանագրով բանկին անցնելու վերաբերյալ, ինչպես նաև այլ ապահովության (երաշխիքներ, պարտավորություններ և այլ) բազային պայմանների նշում և նկարագրություն;

— Ժողովի/խորհրդի որոշումը, պետք է պարունակի ՎՏԲ (Հայաստան)՝ ՓԲԸ-ից վարկ ստանալու, գրավադրվող գույքի, այլ ապահովության, գրավատուների և երաշխավորների հարցերը (նշելով վարկի գումարը, նպատակը, տոկոսադրույթը և այլ արժեքային պայմանները, մարմանը ժամկետը և կարգը, տուգանքները, գրավի առարկան և գնահատվա արժեքը (առկայության դեպքում), համաձայնություն վարկային պայմանագրի խախտման, դեպքում գրավի առարկային արտադատարանային իրացման վերաբերյալ, այդ թվում՝ համաձայնություն գրավի սեփականության իրավունքը գրավի պայմանագրով բանկին անցնելու վերաբերյալ, ինչպես նաև այլ ապահովության (երաշխիքներ, պարտավորություններ և այլ) բազային պայմանների նշում և նկարագրություն;

— Ժողովի/խորհրդի որոշում, որով գործող իրավասու անձին (տնօրենի/ղեկավարին) թույլատրվում է/հանձնարարվում է կնքել թվարկված բազային պայմաններով գործարքներ (ստորագրել պայմանագրեր):

## 5. Առանձին բիզնես ոլորտների համար պահանջվող փաստաթղթերի ցանկ

### 5.1. Առևտրի ոլորտի կազմակերպությունների համար՝

Տեղեկանք պահեստներում և առևտրի կետերում առկա ապրանքների մնացորդների վերաբերյալ (բացված տեսքով):

### 5.2. Ծառայությունների մատուցման ոլորտի կազմակերպությունների համար՝

Ծառայությունների մատուցման տարածքի և տեղերի քանակի վերաբերյալ տեղեկանք:

Միջին ծանրաբեռնվածության վերաբերյալ տեղեկանք պահանջվող ժամանակահատվածի համար (ըստ ամիսների):

Վաճառքների ծավալների վերաբերյալ տեղեկանք ըստ գործընկերների կամ ապրանքատեսակների պահանջվող ժամանակահատվածի համար:

### 5.3. Շինարարական կազմակերպությունների համար (այդ թվում՝ կառուցապատողների)՝

Իրականացվող և պլանավորված շինարարական նախագծերի վերաբերյալ տեղեկանք:

Շինարարության իրականացման թույլտվություն:

Շինարարական նախագիծ և նախահաշիվ (աշխատանքների իրականացման գրաֆիկով):

Ընդհանրացված տեղեկանք նախագծում ներդրումների վերաբերյալ:  
Վաճառվող և վաճառված շինարարական օբյեկտների վերաբերյալ տեղեկանք:

**5.4. Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների համար (այդ թվում՝ արտադրություն և հանքաարդյունաբերություն)**

Արտադրության, վաճառքների և ինքնարժեքների վերաբերյալ տեղեկանք ըստ ամիսների պահանջվող ժամանակահատվածի համար:

Արտադրության միջին ինքնարժեքի հաշվարկներ պահանջվող ժամանակահատվածի համար: